



## **GUSD-ի առցանց վարքի ուղեցույցներ՝ աշակերտական քաղաքացիության համար**

Ստորև բերված են վարքագծի համար կարևոր ուղեցույցները՝ Zoom-ի, Google Hangouts-ի կամ ցանկացած դասարանների առցանց դասավանդումների համար, որոնք աշակերտները և ուսուցիչները կկիսեն: Բացի այդ թվային քաղաքացիության ուղեցույցներից, աշակերտները պետք է շարունակեն պահպանել իրենց դպրոցական սովորական կանոնների/դասարանային կարգապահությանը (հերթով՝ մեկ անձը խոսում է միայն, հարգալից լեզվով և այլն) և GUSD-ի և այլ դպրոցական կանոնները, ներառյալ, բայց չսահմանափակված՝ քաղաքականության հետ կապված աշակերտների կարգապահություն՝ ոտնձգությունները, ահաբեկչությունը և տեխնոլոգիայի ընդունելի օգտագործման համար:

### **Աշակերտներից ակնկալում է՝**

1. Ժամանակին, ըստ դասացուցակի դասերը կատարել ձեր լավագույն հնարավորությունների սահմաններում, կամ հնարավորինս արագ տեսնել գրանցված դասը, երբ այն մատչելի է դառնում: Մի այցելեք առցանց տարածքը, երբ ձեզ չի նշակված այնտեղ լինել, բացառությամբ, եթե ունեք ուսուցչի թույլտվությունը:
2. Մի լուսանկարեք էկրանը, մի ձայնագրեք աուդիո կամ վիդեո ձայնագրությունները և այլ առցանց դասերը կամ հանդիպումները: Որևէ մեկի հետ մի կիսեք ուսուցչի առցանց տարածքի կապը՝ բացի ձեր դասընկերներից և ընտանիքից:
3. Մենք գիտենք, որ միշտ չէ, որ կարող եք կանխել ընտանիքի, այլոց, կամ ընտանի կենդանու հայտնվելը էկրանում, բայց խնդրում ենք, դասի ժամանակ հնարավոր ամեն ինչ արեք, որպեսզի շեղումները նվազագույնի հասցվեն:
4. Խուսափեք խորապատկերից (backgrounds), որոնք շեղում են ձեզ: Խորապատկերները և աշակերտների աշխատանքային տարածքը պետք է գերծ լինեն որևէ նյութից, որը խախտում է օրենքը կամ դպրոցական կանոնները:
5. Աշակերտները չպետք է մասնակցեն կողմնակի խոսակցություններին՝ որևէ այլ սարքի վրա կամ օգտագործեն սարքեր՝ texting /խաղեր խաղեր և այլն, երբ ուսուցիչների առցանց դասավանդման կամ ուսուցչի հետ անմիջական (live) դասաժամ-հանդիպման ընթացքում են:
6. Եթե ուսուցիչը խնդրում է ձեզ, որ ինքներդ լռեք կամ չլռեք, խնդրում ենք պատշաճ պատասխանել նրան:
7. Խուսափեք ձեր միջավայրի աղմուկից կամ խոսակցություններից, որոնք խանգարում են խմբին: Ուսուցիչը գուցե ստիպված լինի ժամանակավորապես լռեցնել ձեզ, մինչև շեղումները դադարեցվեն:
8. Հոգ տարեք փոխառված ցանկացած կրթաշրջանի սարքերի համար և հետևեք GUSD-ի սարքի օգտագործման պայմանագրի ուղեցույցներին:

### **Ծնողները / խնամակալը / այլ տանը ներկա անդամները, ովքեր հետևում են տնային ցուցումներին**

1. Ծնողը/խնամակալը կամ պատասխանատու մեծահասակ խնամակալը պետք է հնարավորինս հսկողություն ապահովեն ուղղակի առցանց հրահանգների ընթացքում:
2. Ընտանիքի անդամները կամ տանը գտնվող այլ անդամները չպետք է խառնվեն, ընդհատեն կամ ներգրավվեն առցանց դասավանդումներին, բացառությամբ այն դեպքերի, երբ ուսուցիչը պահանջի այն:
3. Եթե աշակերտը հեռավար, առցանց կամ հեռախոսային խորհրդատվական ծառայություններ է ստանում GUSD-ի աշխատակցից կամ համագործակցող խորհրդատուից, աշակերտի գաղտնիությունն ապահովելու համար՝ որևէ այլ անձի չի թույլատրվում գտնվել տեսանելի, լսանելի հեռավորության տարածքում կամ սենյակում, որտեղ աշակերտը խորհրդատվական ծառայություններ է ստանում: